ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2023 թվականի N 394-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ, ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՀԱԳՈՒՍՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի 04.10.2023թ. զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված, անչափահաս երեխաներ ունեցող թվով երկու ընտանիքի երեխաների առաջնային կարիքների և հագուստ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 473 610 (չորս հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի հանրային կապերի փորձագետ Մարգարիտա Մանուկյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի հանրային կապերի փորձագետ Մ. Մանուկյանին՝ հավելվածում նշված ընտանիքների անչափահաս

երեխաների առաջնային կարիքների պարագաները և հագուստը հավելվածում նշված քաղաքացիներին հանձնելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2023թ. հոկտեմբերի 4
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի հոկտեմբերի 4-ի N 394 - Ա որոշման

ՑԱՆԿ

Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված, անչափահաս երեխաներ ունեցող թվով երկու ընտանիքի երեխաների առաջնային կարիքների և հագուստ ձեռք բերելու նպատակով հատկացվող գումարի

N:	Ընտանիքի մայր ծնողի անունը, ազգանունը, հայրանունը	Ընտանիքի անչափահաս անդամներ	Նպատակը /ձեռք բերվող ապրանքներ/	Տրամադրվող գումարի չափը ՀՀ դրամ	Մ. Մանուկյանի աշվեհամարը
1	Մարիամ Գուրգենի Բարսեղյան	Բարսեղյան Լիանա Արմենի Բարսեղյան Յանա Արմենի Բարսեղյան Վիրապ Կառլենի Բարսեղյան Ահարոն Կառլենի Բարսեղյան Սիմոն Կառլենի Բարսեղյան Հայկ Կառլենի Բարսեղյան Լիլիա Կառլենի Բարսեղյան Կորյուն Կառլենի	Հագուստ և տակդիրներ	258 870	
2	Լիլիթ Իվանի Իսրաելյան	Փարսոյան Վոլոդյա Սերգեյի Փարսոյան Լուսինե Սերգեյի Փարսոյան Քրիստինե Սերգեյի Փարսոյան Արմեն Սերգեյի Փարսոյան Լարիսա Սերգեյի Փարսոյան Նորիկ Սերգեյի Փարսոյան Ալեքս Սերգեյի Փարսոյան Ավետիս Սերգեյի Փարսոյան Սոսե Սերգեյի	Հագուստ և տակդիրներ	214 740	
Ընդամենը				**473 610**	19300045665000

04.10.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետի
աշխատակազմի գլխավոր
քարտուղար **Է. Մարտիրոսյան**